



ՄՈՒՐԲ ՅԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԽԿԵՂԵՅԻ



ՏԱՏԵԱՐ ԿԻՐԱԿԻ

15 ՄԱՐՏ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	Էջ 1
Ուրիշները չդատել	Էջ 4
Ծանուցում	Էջ 7

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ (56 եւ 57)

Տէրը այսպէս կ'ըսէ.
«Իրաւունքը յարգեցէք եւ արդարութիւն ըրէք, որովհետեւ ահա մօտեցաւ ժամանակը երբ պիտի փրկեմ ձեզ, հասաւ ժամանակը երբ պիտի ողորմիմ ձեզի: Երանի այն մարդուն որ արդարութիւն կ'ընէ եւ իրաւունքը կը յարգէ, իմ Շաբաթներս կը պահէ եւ չի պղծեր գանոնք, եւ կը դադրի անիրաւութիւն գործելէ»: Տիրոջ հաւատացած ոեւէ օտարազգի թող չխորհի եւ չըսէ. «Տէրը զիս իր ժողովուրդին մէջ պիտի չընդունի», եւ ոեւէ ներքինի թող չմտածէ, ըսելով. «Ես անպտուղ ծառ մըն եմ, Տէրը զիս չ'ընդունիր»:

Տէրը այսպէս կ'ըսէ.
«Այն ներքինիները որոնք իմ Շաբաթներս կը պահեն, կ'ընտրեն այն բաները զոր ես կ'ուզեմ եւ իմ Ուխտիս հաւատարիմ կը մնան, իմ տանս եւ իմ ժողովուրդիս մէջ աւելի լաւ տեղ եւ պատիւ պիտի տամ անոնց, քան իմ որդիներուս եւ դուստրերուս. անոնց պիտի տամ յաւիտենական պատիւ մը որ բնաւ պիտի չջնջուի: Իսկ այն օտարազգիները որոնք ինձի հաւատացին ինձի ծառայելու համար, եւ իմ անունս սիրեցին՝ ինձի ծառայ եւ աղախին ըլլալու համար, եւ բոլոր անոնք՝ որոնք իմ Շաբաթներս կը պահեն եւ չեն պղծեր, եւ իմ Ուխտիս հաւատարիմ կը մնան, զանոնք իմ սուրբ լեռս պիտի տանիմ եւ զիրենք պիտի ուրախացնեմ իմ աղօթքի տանս մէջ. պիտի ընդունիմ իմ Սեղանիս վրայ իրենց մատուցած ողջակէզներն ու զոհերը, որովհետեւ իմ տունս աղօթքի տուն պիտի ըլլայ բոլոր հեթանոսներուն համար»:

Այսպէս կ'ըսէ Տէր Աստուած որ Իսրայէլի ցրուած զաւակները կը ժողվէ.

«Պիտի ժողվեմ օտարազգիները եւ իմ ժողովուրդիս միացնեմ»:

Եկէ՛ք, ով դաշտի գազաններ, եկէ՛ք կերէք իմ ժողովուրդս, ո՛վ անտառի գազաններ: Տեսէ՛ք, ահա, կուրցած են անոր առաջնորդները, ի վիճակի չեն դատելու. կը նմանին համր շուներու որոնք չեն կրնար հասել. անկողին կ'երազեն, քնանալ կը սիրեն: Իրենց հոգիով աներես շուներու կը նմանին. չարիքէն չեն կշտանար, որովհետեւ կորսնցուցած են իրենց դատողութիւնը: Ամէնքն ալ իրենց ուզածը ըրին, իւրաքանչիւրը իր շահը հետապնդելով: Ըսին. «Եկէ՛ք գինի առնենք եւ իմենք՝ մինչեւ գինովնանք, որովհետեւ վաղն ալ այսօրուան պէս եւ շատ աւելի լաւ պիտի ըլլայ»:

Տեսէ՛ք ի՛նչպէս արդարը կը կորսուի եւ ոեւէ մէկը հոգ չ'ըներ. արդար մարդիկը աշխարհէն կը վերցուին եւ ոեւէ մէկը չ'անդրադառնար թէ աշխարհի անիրաւութեան պատճառով անիկա կը վերցուի: Բայց անիկա խաղաղութեամբ գերեզման պիտի մտնէ որովհետեւ Աստուած է որ զայն վերցուց աշխարհէն: Իսկ ուրք հո՛ս եկէ՛ք, անօրէն զաւակներ, պոռնիկներու եւ շնացողներու սերունդ:

արդար մարդիկը
աշխարհէն
կը վերցուին
եւ ոեւէ մէկը
չ'անդրադառնար
թէ աշխարհի
անիրաւութեան
պատճառով
անիկա կը
վերցուի:

Ո՞վ կը ծաղրէք, որո՞ւն դիմաց կը փորձէք արդարանալ. միթէ՛ դուք չընտրեցի՞ք ձեր կորուստը, ո՛վ անօրէն սերունդ: Դուք չէի՞ք որ անտառախիտ ծառերուն տակ ձեր կիրքերը հրահրող աստուածներու կ'աղօթէիք եւ ձորերու խորը, ժայռերու գլխուն կամ քարայրներու մէջ ձեր զաւակները կը մորթէիք: Այդ քարէ կուռքե՛րը պիտի ըլլան ահա ձեր բաժինը. անո՛նք պիտի ըլլան ձեր ժառանգելիքը, որովհետեւ անոնց առջեւ թափեցիք ձեր գինիները եւ անոնց մատուցանեցիք ձեր զոհերը: Եւ կ'ուզէք որ այս բոլորին վրայ չբարկանամ,- կ'ըսէ Տէրը,-:

Բարձր լերան բարձունքին դրիք ձեր պոռնկութեան անկողինը, հոն ելաք զոհ մատուցանելու: Ձեր տուններուն դռներուն դրանդիկներուն ետին ալ այդ կուռքերուն յիշատակները կախեցիք, կարծելով որ ինձմէ

հեռու մնալով աւելի բան մը պիտի գտնէք: Ձեր անկողինները լաւնցուցիք, այր հոմանիներու հետ անկողին մտաք եւ անդադար պոռնկութիւն ըրիք անոնց հետ: Օտար երկիրներէ բազմաթիւ աստուածներ որդեգրեցիք, եւ տակաւին ուրիշներ ալ փնտռելու համար ներկայացուցիչներ ղրկեցիք ձեր սահմաններէն դուրս. այնքան նուաստացաք որ նոյնիսկ դժոխքէն ձեզի աստուած մը փնտռեցիք: Եւ թէպէտ նոր աստուածներ փնտռելէն յոգնեցաք, բայց բնաւ չըսիք. «Ա՛լ կը բաւէ», որովհետեւ խորհեցաք թէ անոնք կրնան ձեզի ոյժ տալ, եւ ուստի չհնազանդեցաք ինծի: Որմէ՞ վախցաք կամ սարսափեցաք որ ուրացաք զիս եւ չյիշեցիք անգամ, մոռցաք զիս եւ ձեր հոգն անգամ չըրիք: Ես ալ հիմա

Օտար երկիրներէ բազմաթիւ աստուածներ որդեգրեցիք, եւ տակաւին ուրիշներ ալ փնտռելու համար ներկայացուցիչներ ղրկեցիք ձեր սահմաններէն դուրս.

Ձեր այդ կողմերէն՝ պիտի անտեսեմ, որովհետեւ յաւիտենական Աստուածն եմ ես, եւ դուք ատիկա գիտնալով հանդերձ՝ չվախցաք ինձմէ: Հիմա ձեզի ցոյց պիտի տամ ձեր արդարութիւնը՝ ձեզի յայտնելով ձեր չարիքները, որոնք պիտի չօգնեն ձեզի:

... անոնք որոնք ինծի յուսացած են՝ անոնք երկիրը պիտի ստանան որպէս վարձատրութիւն, իմ սուրբ լեռս պիտի ժառանգեն:

Ձեր այդ կողմերուն պիտի աղաղակէք, բայց անոնցմէ ոեւէ մէկը ձեզ պիտի չփրկէ ձեր նեղութենէն, որովհետեւ հովը պիտի քչէ ձեր աստուածները եւ մըրրիկը զանոնք պիտի տարտղնէ: Մինչդեռ անոնք որոնք ինծի յուսացած են՝ անոնք երկիրը պիտի ստանան

որպէս վարձատրութիւն, իմ սուրբ լեռս պիտի ժառանգեն: Այն ատեն պիտի ըսեն. «ճամբաները մաքրեցէք. իմ ժողովուրդիս ճամբէն վերցուցէք ամէն խոչընդոտ»»: Այսպէս կ'ըսէ Բարձրեալ Տէրը որ բարձունքներուն մէջ կը բնակի յաւիտեան, ան՝ որ սուրբերուն մէջ Սուրբն է. ԲԱՐՁՐԵԱԼ ՏԵՐ է անոր անունը. որ իր սուրբերուն մէջ կը բնակի, համբերութիւն կու տայ ընկճուածներուն եւ կեանք կու տայ սրտաբեկներուն, ըսելով. «Յաւիտեան վրէժխնդիր պիտի չըլլամ, միշտ ձեզի դէմ բարկացած պիտի չմնամ. չէ՞ որ ես եմ հոգին տուողը, ես ստեղծեցի բոլոր շունչերը: Կարճ ժամանակ մը տրամեցուցի իմ ժողովուրդս իր մեղքերուն պատճառով. հարուածեցի զայն,

երես դարձուցի անկէ, եւ ան սրտնեղած՝ աւելի ըմբոստացաւ եւ իր ուզածը ըրաւ: Բայց ես իր խորհուրդներն ու գործերը տեսայ եւ զայն բռնեցի. իմ խօսքովս մխիթարեցի զայն՝ ճշմարիտ մխիթարութիւնը տալով իրեն եւ իր սգաւորներուն: Խաղաղութեան վրայ խաղաղութիւն տուի թէ՛ հեթանոսներուն եւ թէ՛ իմ ժողովուրդիս,՝ կ'ըսէ Տէրը,՝ եւ ես պիտի բռնեմ զիրենք: Իսկ անօրէնները պիտի ծփան ծովու մը պէս որ հանգիստ չունի բնաւ, եւ որուն ջուրերը ցելս ու կաւ դուրս կը նետեն: Այո, ամբարիշտները խաղաղութիւն պիտի չգտնեն»,՝ կ'ըսէ Տէրը:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԵՓԵՍՍԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ
(4.17-5.14)

Արդ, Տիրոջ կողմէ կ'ազդարարեմ ձեզի.՝ չըլլայ որ կրկին դառնաք այն կենցաղին որով հեթանոսները կ'ապրին անմտօրէն: Անոնց միտքը խաւարած է. իրենց տգիտութեան եւ յամառ անտարբերութեան պատճառով օտարացած են Աստուծոյ կեանքին, եւ քանի այդ կեանքին յոյսը չունին, իրենք զիրենք անառակութեան տուած՝ ամէն պղծութիւն կը գործեն անյազօրէն: Բայց ես ձեզի սորվեցուցի թէ այդ չէ՛ Քրիստոսի ճամբան: Դուք լսեցիք իր պատգամները եւ իրեն միանալով սորվեցաք թէ Յիսուսի մէջ է ճշմարտութիւնը: Ուստի մոռցէ՛ք ձեր հին ինքնութիւնը, այսինքն ձեր նախկին ապրելակերպը, որ խաբուսիկ ցանկութիւններով ապականած էր, վերանորոգուեցէ՛ք հոգիով՝ ձեր մտածելակերպը փոխելով, եւ եղէք նոր մարդ մը, Աստուծոյ պատկերին համաձայն ստեղծուած. եւ ապրեցէ՛ք ճշմարիտ կեանքը, արդարութեամբ եւ սրբութեամբ:

վերանորոգուեցէ՛ք հոգիով՝ ձեր մտածելակերպը փոխելով, եւ եղէ՛ք նոր մարդ մը, Աստուծոյ պատկերին համաձայն ստեղծուած...

Հետեւաբար ստախօսութենէ հրաժարեցէ՛ք: «Ամէն մարդ ճշմարտութիւնը թող ըսէ իր ընկերոջ», ինչպէս կ'ըսէ մարգարէն, որովհետեւ Քրիստոսի միացած ըլլալով՝ իրարու անդամներ ենք: Եւ, ինչպէս սաղմոսներգուն կ'ըսէ. «Նոյնպէս երբ բարկանաք՝ չըլլայ որ մեղանչէք». եւ բարկացած չմնաք մինչեւ իրիկուն: Բնաւ առիթ մի՛ տաք սատանային: Ով որ գողութեամբ կ'ապրէր թող այլեւս չգողնայ, այլ վարժուի արդար վաստակով ո՛չ միայն իր հացը շահելու, այլ նաեւ բարիք գործելու՝ օգնելով անոնց

որոնք կարօտ են: Որեւէ տգեղ խօսք չելլէ ձեր բերնէն: Խօսեցէք միայն ինչ որ պէտք է, ինչ որ բարի է՝ ուրիշներուն հաւատքը ամրապնդելու համար, որպէսզի լսողները շնորհքով լեցուին: Մի՛ տրտմեցնէք Աստուծոյ Սուրբ Հոգին, որով կնքուեցաք՝ փրկութեան օրուան հասնելու համար: Զեզմէ արմատախիլ ըրէք ամէն դառնութիւն, բարկութիւն եւ զայրոյթ, պոռչտուք եւ հայհոյութիւն, եւ առաջք առած կ'ըլլաք անոնց չար հետեւանքներուն: Իրարու հանդէպ քաղցր ու գթած եղէք եւ ներեցէք իրարու, ինչպէս Աստուած ալ Քրիստոսի միջոցաւ ներեց մեզի:

Աստուծոյ նմանեցէք, որպէս իր սիրելի որդիները, եւ սիրով շարժեցէք, այնպէս ինչպէս Քրիստոս մեզ սիրեց եւ մեզ փրկելու համար ինքզինքը Աստուծոյ ընծայեց որպէս անուշահոտ պատարագ եւ գոհ: Պոռնկութեան, ոեւէ

... սիրով շարժեցէք...:

պղծութեան կամ ազահուլութեան խօսքն իսկ թող չըլլայ ձեր մէջ, որովհետեւ այդպէս կը վայելէ հաւատացեալներուն: Վայել չէ որ լկտի եւ ամբարիշտ խօսակցութիւններով կամ խեղկատակութեամբ զբաղիք. այլ՝ ձեր խօսակցութիւնը միշտ գոհաբանութիւն պէտք է ըլլայ: Մէկ բան վստահ գիտցէք, թէ ոեւէ մէկը որ պոռնկութիւն կ'ընէ, պղծասէր է կամ ազահ - եւ ազահութիւնը կուպաշտութիւն է - ժառանգութիւն պիտի չունենայ Քրիստոսի եւ Աստուծոյ արքայութեան մէջ: Հետեւաբար չըլլայ որ ոեւէ մէկը պարապ խօսքերով ձեզ խաբէ. որովհետեւ այս բաներուն համար Աստուած իր բարկութիւնը պիտի թափէ անխրատ մարդոց վրայ: Ասկէ ետք որեւէ յարաբերութիւն մի՛ ունենաք այնպիսիներուն հետ, որովհետեւ թէպէտ ժամանակ մը խաւար էիք, սակայն հիմա որ Տիրոջ միացաք՝ լոյս էք: Հետեւաբար լոյսի որդիներուն վայել ձեւով ապրեցէք.

Ձանացէք հասկնալ թէ Աստուած ի՛նչ կ'նուգէ ձեզմէ...

Ընդհակառակը, ձողկեցէք զանոնք, որովհետեւ մոլութիւն մէջ կը գործուին անոնց արարքները որոնց մասին խօսիլն իսկ ամօթ է: Բայց բոլոր այդ ծածուկ արարքները Քրիստոսի լոյսով կը յայտնուին եւ կը յանդիմանուին, որովհետեւ լոյսը կը յայտնէ ամէն բան: Ահա թէ ինչու մարգարէն կ'ըսէ.

«Արթնցի՛ր, ո՛վ քնացած. դո՛ւրս ելի՛ր մեռելութենէդ, եւ Քրիստոս պիտի լուսաւորէ քեզ»:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ (16.1-31)

Իր աշակերտներուն Յիսուս այս առակը պատմեց.-

«Մեծահարուստ մարդ մը կար, որ իր ստացուածքներուն վերակացու տնտես մը ունէր: Երբ տնտեսին մասին մարդիկ ամբաստանութիւն ըրին, ըսելով թէ իր տիրոջ հարստութիւնը կը վատնէ, մեծահարուստը կանչեց զինք եւ ըսաւ. “Ի՞նչ են քու մասիդ այս ըսուածները: Քեզի յանձնած բոլոր ստացուածքներուս հաշիւը տուր: Այլեւս իմ տնտեսս չես կրնար ըլլալ”: Տնտեսը ինքնիրեն խորհեցաւ. “Ի՞նչ կրնամ ընել. ահա տէրս զիս տնտեսութեան պաշտօնէն կը զրկէ: Բանուորութիւն չեմ կրնար ընել, մուրալու կ'ամչնամ: Սակայն գիտեմ թէ ի՛նչ պէտք է ընեմ, որ երբ տէրս տնտեսութեան պաշտօնէն հեռացնէ, մարդիկ զիս ընդունին իրենց տուներէն ներս”: Ապա մէկ առ մէկ կանչեց իր տիրոջ պարտականները եւ առաջինին հարցուց. “Ո՞րքան պարտք ունիս տիրոջս”: Ան պատասխանեց. “Երկու հարիւր թիթեղ ձէթ”: Տնտեսը ըսաւ. “Ահաւասիկ պարտամուրհակդ. նստէ՛ եւ անմիջապէս գրէ՛ հարիւր”: Յետոյ հարցուց միւսին. “Դո՞ւն որքան պարտք ունիս”: Ան պատասխանեց. “Չորս հարիւր յիսուն պարկ ցորեն”: Տնտեսը ըսաւ. “Ահաւասիկ պարտամուրհակդ. նստէ՛ եւ գրէ՛ երեք հարիւր յիսուն”: Տէրը ասիկա լսելով գովեց անիրաւ տնտեսը իր հնարամտութեան համար: Որովհետեւ այս աշխարհի մարդիկը իրենց գործերը վարելու մէջ աւելի ճարպիկ են քան լոյսի որդիները: Եւ ես կ'ըսեմ ձեզի.- Աշխարհիկ հարստութիւնը գործածեցէք այնպէս՝ որ Աստուծոյ բարեկամութիւնը չահիք, որպէսզի երբ այս աշխարհէն ելլէք, ձեզ յաւիտենական յարկերու մէջ ընդունին:

«Ով որ փոքր ծառայութեան մէջ հաւատարիմ է, մեծից մէջ ալ հաւատարիմ է...»:

«Ով որ փոքր ծառայութեան մէջ հաւատարիմ է, մեծին մէջ ալ հաւատարիմ է. իսկ ով որ փոքր ծառայութեան մէջ անհաւատարիմ է, մեծին մէջ ալ անհաւատարիմ է: Հետեւաբար, եթէ աշխարհիկ հարստութիւնը գործածելուն մէջ հաւատարիմ չեղաք, ճշմարիտ հարստութիւնը ո՞վ պիտի վստահի ձեզի: Այսինքն, եթէ հաւատարիմ չեղաք աշխարհիկ հարստութեան, որ ձերը չէ, ինչպէ՞ս

կ'ուզէք որ Աստուած ձեզի տայ ձեզի սպասող ճշմարիտ հարստութիւնը: Ո՛չ մէկ ծառայ կրնայ երկու տէրերու ծառայել, որովհետեւ կ'ամ մէկը պիտի ատէ եւ միւսը սիրէ, կ'ամ մէկը պիտի մեծարէ եւ միւսը արհամարհէ: Չէք կնար թէ՛ Աստուծոյ ծառայել եւ թէ՛ դրամին:

Փարիսեցիները, որոնք դրամասէր էին, երբ այս բոլորը լսեցին, սկսան հեզնել զինք: Յիսուս ըսաւ անոնց. «Դուք ձեզ ուրիշներուն արդար ցոյց կու տաք, սակայն Աստուած գիտէ ձեր սիրտերը: Որովհետեւ մարդոց աչքին փառաւորը Աստուծոյ աչքին անարգ է: Մովսէսի Օրէնքը եւ մարգարէներու ուսուցումները մինչեւ Յովհաննէս ի զօրու էին. անկէ ասդին Աստուծոյ արքայութիւնը կ'աւետարանուի եւ ամէն մարդ կը փութայ բռնութեամբ ներս մտնել: Աւելի դիւրին է, որ երկինքն ու երկիրը կորսուին, քան Օրէնքին ամենափոքր տառը:

անկէ ասդին Աստուծոյ արքայութիւնը կ'աւետարանուի եւ ամէն մարդ կը փութայ բռնութեամբ ներս մտնել:

«Ով որ իր կինը արձակէ եւ ուրիշ մը առնէ, կը շնայ. նոյնպէս կը շնայ ան, որ արձակուած կնոջ հետ կ'ամուսնանայ:

«Մեծահարուստ մարդ մը կար, որ բեհեզ եւ ծիրանի հագուստներ կը հագնէր եւ ամէն օր փառաւոր խնճոյք կ'ընէր: Ղազարոս անուսով աղքատ մըն ալ կար, որ անոր դրան առջեւ կը նստէր եւ կը յուսար իր փորը լեցնել մեծահարուստին սեղանի աւելցուքներով: Ղազարոս վէրքերով ծածկուած էր, եւ շուններ կու գային իր վէրքերը կը լիզէին: Աղքատը մեռաւ եւ հրեշտակները զինք տարին Աբրահամին մօտ: Մեծահարուստն ալ մեռաւ եւ թաղուեցաւ: Դժոխքին մէջ, մինչ մեծահարուստը կը տանջուէր, աչքերը բարձրացուց եւ հռուս Աբրահամը տեսաւ, ինչպէս նաեւ Ղազարոսը որ կը նստէր անոր քով: Մեծահարուստը աղաղակեց. “Հայր Աբրահամ, ողորմէ՛ ինձի եւ զրկէ Ղազարոսը, որ մատին ծայրը ջուրին թաթիսէ եւ զովացնէ լեզուս, որովհետեւ այս կրակին մէջ ծարաւէն կը տառապիմ”: Աբրահամ ըսաւ անոր. “Որդեա՛կ, յիշէ թէ ի՛նչպէս դուն քու կեանքիդ ընթացքին ամէն բարիք վայելեցիր, մինչ Ղազարոս չարչարուեցաւ: Հիմա ան հոս կը հանգստանայ, մինչ դուն հող կը տառապիս: Գիտցիր նաեւ, որ մեծ անդունդ մը կայ մեր եւ ձեր միջեւ: Եթէ ուզեն այստեղէն ձեր մօտ

անցնիլ՝ չեն կրնար, եւ ոչ ալ մէկը հոնկէ մեր մօտ կրնայ գալ”: Մեծահարուստը ըսաւ. “Կ'աղաչեմ, Հայր Աբրահամ, Ղազարոսը զրկէ իմ հօրս տունը ուր հինգ եղբայրներ ունիմ. թող զանոնք նախագգուշացնէ, որպէսզի անոնք ալ տանջանքի այս վայրը չգան”: Աբրահամ ըսաւ անոր. “Անոնք Մովսէսի Օրէնքն ու մարգարէները ունին. թող անոնց պատուիրանները լսեն եւ գործադրեն”: Մեծահարուստը ըսաւ. “Ատիկա բաւարար է, Հայր Աբրահամ. բայց եթէ մեռելներէն մէկը յարութիւն առնէ եւ երթայ իրենց, պիտի ապաշխարեն”: Աբրահամ պատասխանեց. “Եթէ Մովսէսի Օրէնքին եւ մարգարէներուն մտիկ չեն ըներ, մեռելներէն յարութիւն առնող մըն ալ պիտի չկարենայ համոզել զիրենք”»:

ՄԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ
ՄԱՏԹԵՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԻՆ
Հեղինակ՝ ՉԱՐԵՀ ԱՐՔ. ԱՉՆԱԲՈՐԵԱՆ
ԽԱՐԱԳՈՒ՝ ԳԵՈՒԿ Բ. Գ.

Է

ՈՒՐԻՆՆԵՐՈ ՉՈՒՏԵԱԼ (1-6):

«Մի՛ դատէ ուրիշները, որպէսզի Աստուած ալ ձեզ չդատէ. որովհետեւ ի՛նչ սկզբունքով որ ուրիշները դատէ՛ Աստուած անով պիտի դատէ ձեզ, եւ ի՛նչ չափանիշ որ գործածէ՛՞ նոյնը Աստուած պիտի գործածէ ձեզ դատելու համար: Ինչո՞ւ եղբորդ աչքին մէջ եղած շիւղը կը տեսնես եւ չես անդրադառնար թէ աչքիդ մէջ գերան կայ: Կամ, ի՞նչպէս եղբորդ կ'ըսես. «Ձգէ որ աչքիդ մէջ եղած շիւղը հանեմ», երբ որ գերան ունիս աչքիդ մէջ: Կեղծաւոր, նախ աչքիդ մէջէն գերանը հանէ, որ կարենաս յստակ տեսնել եւ ա՛պա միայն եղբորդ աչքին շիւղը հանել: Ոեւէ սրբութիւն շունեթուս մի՛ տա՛, ձեր մարգարիսներն ալ խոզերուն առջեւ մի՛ նետէ՛, որպէսզի չըլլայ թէ զանոնք կոխկռտեն եւ դառնան ձեր վրայ յարձակից»:

Ի՞նչ կը նշանակէ «դատել»: Ատով մէկէ աւելի բաներ կը հասկնանք:

Առաջին՝ դատողութիւն բանեցնել կամ գործածել: Կեանքի մէջ ամէն վայրկեան մենք մեզ շրջապատող մարդիկը կը դիտենք եւ անոնց մասին մեր դատողութիւնը կ'ընենք: Այս հասկացողութեամբ՝ դատելը անհրաժեշտ է կեանքը կարգաւորելու համար կամ բարիին ու չարին միջեւ ընտրութիւն մը ընելու համար:

Յիսուսի ըսած «դատել»ը՝ այս իմաստով դատելը չէ սակայն: Անիկա ժխտական առումով դատողութեան կը վերաբերի: Այսինքն՝ ուրիշին կամ ուրիշներուն մասին դատաստան մը ընել կամ վճիռ մը արձակել կամ դատապարտել

Մի՛
դատապարտե՛ք
ուրիշները,
որպէսզի
Աստուած
ալ ձեզ
չդատապարտէ:

կը նշանակէ: Խօսքը,
ուրեմն, կ'ըսէ. Մի՛
դատապարտէք ուրիշները,
որպէսզի Աստուած ալ ձեզ
չդատապարտէ:

Սակայն թէ՛ անհատ
քրիստոնեան եւ թէ՛
Եկեղեցին ստիպողութեան
առջեւ են երբեմն՝ թէ՛

դատելու եւ թէ՛ դատապարտելու: Յիշենք
Քրիստոսի խօսքը, որ կ'ըսէ. «Եթէ եղբայրդ
քեզի դէմ մեղանչէ, գնա յանդիմանէ գայն,
երբ երկուքդ առանձին էք: Եթէ մտիկ ընէ
քեզի՝ եղբայրդ շահած կ'ըլլաս: Իսկ եթէ մտիկ
չընէ քեզի՝ հետդ մէկ կամ երկու հոգի եւս առ,
որպէսզի երկու կամ երեք վկաներու բերնով
հաստատուի ամէն ամբաստանութիւն: Իսկ եթէ
անոնց ալ մտիկ չընէ՝ բոլոր հաւատացեալներուն
ներկայութեան ըսէ, եւ եթէ անոնց ալ մտիկ չընէ՝
զինք նկատէ հեթանոս մը եւ կամ մաքսաւոր մը»
(Մտ 18.15-17):

Հետեւաբար, թէ՛ քրիստոնեան եւ թէ՛
Եկեղեցին կը դատեն եւ կը դատապարտեն:
Սակայն քրիստոնէական դատումը եւ
դատապարտութիւնը տարբեր հասկացողութիւն
ունին: Հաւատացեալ ժողովուրդէն դուրս
դնելու կամ հաւատացեալ ժողովուրդին մէջէն
վերցնելու իմաստը ունին, եւ ոչ թէ սեփական կամ
այլ ձեռքերով կորստեան մատնելու իմաստը:
Քրիստոնեան չէ որ կորուստի կը մատնէ:
Կամ Եկեղեցին չէ որ կորուստի կը մատնէ:
Սատանային կամքն է կորուստի մատնողը:

Առաջին Կորնթացիներու 5-րդ գլուխին
մէջ Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Լսեցի ձեր մէջ
տեղի ունեցած անբարոյութեան մը մասին.
եւ այնպիսի անբարոյութիւն մը՝ որ նոյնիսկ
հեթանոսներուն մօտ դատապարտուած է: Լսեցի
արդարեւ, թէ մարդուն մէկը իր հօր կնոջ հետ
կը կենակցի: Եւ դեռ դուք կը հպարտանա՞ք.
պէտք չէ՞ր, ընդհակառակը, սգայիք, եւ ձեր
մէջէն դուրս դնէիք այդ անբարոյութիւնը
գործողը: Ես թէպէտեւ մարմինով հեռու՝ բայց
հոգիով ձեզի հետ եմ, եւ արդէն իբրեւ ձեր
մէջ ներկայ՝ վճիռս տուի: Կ'ուզեմ որ երբ մեր
Տիրոջ Յիսուս Քրիստոսի անունով իրարու քով
գաք, եւ ես ալ հոգիով ձեզի հետ ըլլամ, մեր
Տէր Յիսուս Քրիստոսի տուած իշխանութեամբ՝
այդ անբարոյութիւնը գործողը իր մարմինով
Սատանային կամքին ձգէք, որպէսզի մարմինը
կորսուի, եւ այսպիսով թերեւս հոգին փրկուի
մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի դատաստանին
օրը» (Ա. Կր 5.1-5): Կամ՝ «...չյարաբերիք անոնց
հետ՝ որոնք թէպէտ քրիստոնեայ եղբայր կը

կոչուին, բայց կա՛մ պոռնկութիւն կ'ընեն կամ
կռապաշտ են, կա՛մ ագահ կամ բամբասող, կա՛մ
գինեմոլ եւ կամ յափշտակող:

Այսպիսիներուն հետ նոյնիսկ
սեղան մի՛ նստիք: Ես ի՞նչ
պէտք ունիմ դատելու անոնք՝
որ եկեղեցիին անդամ չեն.
Թող Աստուած դատէ զանոնք:

Բայց չէ՞ որ եկեղեցիին անդամները դատելը
ձեր գործն է: Ուստի, ինչպէս Ս. Գիրքը կ'ըսէ.՝
«Չարիքը ձեր մէջէն վերցուցէք» (նոյն, հմբք 11-
13):

Արդ, երբ Եկեղեցւոյ անդամներէն մէկը կը
գտնուի բարոյական այնպիսի անընդունելի
ընթացքի մը մէջ, որ ուրիշներուն դայթակողութիւն
կը պատճառէ եւ անսրբագրելի կերպով կը
համարի մնալ իր այդ վարմունքին մէջ, թէ՛
անհատապէս եւ թէ՛ Եկեղեցւոյ կողմէ՝ նման անձ
մը պէտք չէ ընդունուի: Ինչպէս մէջբերուածները
յստակօրէն կը յայտնեն, առաքեալը խստօրէն
կը դատապարտէ այնպիսին, որ անկարգութեան
պատճառ է:

Յովհաննէս աւետարանիչ եւս, որ սիրոյ
առաքեալն է, շատ խիստ ոճով ըսած է. «Ով որ
Քրիստոսի ուսուցումներուն դէմ կը մեղանչէ եւ
անոնց կապուած չի մնար, անիկա զԱստուած
իր մէջ չունի: Իսկ ով որ անոր ուսուցումներուն
կապուած կը մնայ, անիկա թէ՛ Որդին ունի իր մէջ
եւ թէ՛ Հայրը: Եթէ ձեզի գայ մէկը՝ որ այսպէս
չ'ուսուցանէր, գայն ձեր տունները մի՛ ընդունիք
եւ նոյնիսկ բարեւ մի՛ տաք անոր: Որովհետեւ
անոր բարեւ տուողը անոր չար գործերուն
մասնակից կը դառնայ» (Բ. Յճ 9-11):

Եկեղեցին իր դատապարտելու իշխանութիւնը
կը գործածէ եւ կը դատապարտէ երբեմն: Բայց ի՞նչ
սկզբունքով կը կատարէ դատապարտութիւնը:

Մեր, ինչպէս նաեւ Եկեղեցւոյ դատելուն եւ
դատապարտելուն մէջ, պէտք չէ տեղ ունենան
անձնական հաշիւները: Ասկէ է, որ առաջին
հերթին Յիսուս կը զգուշացնէ:

Երբ մենք ուրիշը կը դատենք եւ կը
դատապարտենք անձնական հաշիւներէ
մեկնելով՝ սխալի մէջ կը գտնուինք: Նաեւ
սխալ դատած կ'ըլլանք եւ անարդարօրէն
դատապարտած կ'ըլլանք մեր նմանը, երբ
մեզմով կամ մեր օրինակով կը դիտենք գայն եւ
անոր արարքները: Նման մօտեցումներէ պէտք
է զգուշանալ:

Այս բաժինը կէտով մը կը կապուի «Հայր
մեր»ին:

«Հայր մեր»ին մէջ ներելու եզրը կայ, որ
կ'ըսէ. «Եւ թող մեզ զպարտիս մեր՝ որպէս եւ
մեք թողումք մերոց պարտապանաց»:

«Չարիք
ձեր մէջէն
վերցուցէք»:

Մենք ուրիշներուն արարքները պէտք է դիտենք ոչ թէ անձնական հաշիւներէ մղուած դատողի աչքով, այլ ներողի աչքով: Աւելի պէտք է ներողի կեցուածք ունենանք, քան թէ դատապարտողի: Որովհետեւ այն մարդը որ կը փորձէ Աստուծոյ ներում գտնել, նախ ինք պէտք է ներէ: «Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողու՞մք մերոց պարտապանաց» խօսքը յստակօրէն մեզի կ'ըսէ, որ փոխանակ դատապարտելու՝ մենք պէտք է ներենք: Ով որ Աստուծոյ դատապարտութիւն չուզեր ստանալ, ինքն ալ պէտք է դատապարտէ ուրիշը:

«Ինչո՞ւ եղբօրդ աչքին մէջ եղած շիւղը կը տեսնես, եւ չես անդրադառնար, թէ աչքիդ մէջ գերան կայ: Կամ, ի՞նչպէս եղբօրդ կ'ըսես.– Զգէ որ աչքիդ մէջ եղած շիւղը հանեմ.– Երբ որ գերան ունիս աչքիդ մէջ: Կեղծաւոր, նախ աչքիդ մէջէն գերանը հանէ, որ կարենաս յստակ տեսնել եւ ա'պա միայն եղօրդ աչքին շիւղը հանել»:

Մեր բոլորի աչքին մէջ գերան կայ ոչ թէ մարդոց յարաբերար, այլ՝ Աստուծոյ: Մեր բոլորի աչքին մէջ գերան կայ ոչ թէ մարդոց յարաբերար, այլ՝ Աստուծոյ: Երբ մենք Աստուծոյ դիմաց կը կանգնինք, Աստուած գիտէ մեր բոլոր մեղքերը եւ մեր մեղքերուն ծանրութիւնը: Բայց Աստուած՝ ինք որ ներողամտութեամբ կը նայի եւ մեր մեծագոյն մեղքերը ներելու պատրաստ է, ինչպէ՞ս կրնայ մեզ ընդունիլ, երբ մենք ուրիշներու ամենէն փոքրիկ թերութիւնը կամ յանցանքը չենք կրնար ներել: Այն վերաբերումը որ մենք կ'ունենանք ուրիշներուն հանդէպ, նոյն վերաբերումը կրնանք ակնկալել Աստուծոյ:

«Որեւէ սրբութիւն շունչերուն մի՛ տաք, ձեր մարգարիտներն ալ խոզերուն առջեւ մի՛ նետէք, որպէսզի չըլլայ թէ զանոնք կոխկռտեն եւ դառնան ձեր վրայ յարձակին»:

Ի՞նչ բանի մասին կը խօսի արդեօք: Տարբեր ձեւերով մեկնուած է այս համարը: Ոմանք «շունչեր» բառին տակ կը տեսնեն հեթանոսները: Յիշեցէք օրինակ՝ երբ Յիսուս Փիւնիկէի սահմանները գնաց, քանանացի կին մը իրեն եկաւ եւ իր աղջկան համար բժշկութիւն կ'ուզէր (տե՛ս Մտ 15.21-28): Յիսուս պատկերաւոր բացատրութիւն մը գործածեց եւ ըսաւ. «Ճիշդ չէ՛ մանուկներուն ձեռքէն հացը առնել եւ շունչերուն նետել»: Իրականին մէջ Յիսուս շունչերու մասին չէր խօսեր, ոչ ալ կ'անարգէր հեթանոսները: Այս փոխաբերութեամբ ան ըսել կ'ուզէր, որ Աստուծոյ խօսքին պարգեւները Աստուծոյ ժողովուրդին

սահմանուած են, յետոյ է որ ժամանակը պիտի գայ եւ Աստուծոյ պարգեւները պիտի տրուին նաեւ հրեայ ժողովուրդէն դուրս՝ այլ ժողովուրդներու կամ հեթանոսներու:

Այս համարին «շունչեր» արդեօք կրնա՞յ վերաբերիլ նաեւ բոլոր անոնց՝ որոնք սրբութեան արժէքը չեն գիտեր: Այո:

Բայց այստեղ ի՞նչ սրբութեան մասին է խօսքը:

Կան տարբեր բացատրութիւններ. այսպէս՝ թէ անիկա ակնարկութիւն է Աստուծոյ արքայութեան, կամ Աստուծոյ խօսքի այս կամ այն տարրին, կամ Ս. Հաղորդութեան:

Ըստ իս, «որեւէ սրբութիւն» բացատրութեամբ Յիսուս կը խօսի ներումի մասին: Որովհետեւ, եթէ սրբութեամբ հասկնանք Աստուծոյ արքայութիւնը, կամ Աստուծոյ խօսքին այս կամ այն տարրը, կամ Ս. Հաղորդութիւնը, այն պարագային համարը որեւէ կապ չունենար իր շրջագիծին հետ: Համարին շրջագիծը մեզի կը խօսի չդատապարտելու, այլ ներելու մասին: Ուստի, «որեւէ սրբութիւն»-ով ակնարկուածը ներումի արարքն է:

Անշուշտ ներող ըլլալ՝ չի նշանակեր թոյլ ըլլալ: Օրինակ, ոեւէ որ մեղանչած է եւ բարոյական անկարգութեան մէջ գտնուելով ուրիշներուն գայթակղութիւն կը պատճառէ, ինչպէ՞ս պէտք է վարուիլ անոր հետ:

Ներողամիտ պէտք ըլլալ եւ պէտք է աղօթել անոր համար: Բայց միաժամանակ որպէսզի ենթական ալ ներողամտութիւնը լուրջի առնէ, եւ որպէսզի կամենայ նոյն ընկերութեան, այսինքն՝ Եկեղեցւոյ վերադառնալ, անոր մարմինին վերստին մաս կազմել փոխուած բարոյականով, կանոնական որոշ խստութեան մը պէտք է գայն ենթարկել, որպէսզի անոր գայթակղացի ընթացքին վարակը չթափանցէ եւ չտարածուի մարմինին մէջ:

Այս մէկը ներողամտութեան սկզբունքին ժխտումը չէ: Որովհետեւ իմ ներումս կը մնայ. ես սրտանց կը ներեմ իրեն:

Բայց նաեւ իր վերադարձին համար պայման կը դնեմ: Այս պայման դնելս՝ աններողամտութիւն չի նշանակեր: Իր բարիքին համար կ'ընեմ, որպէսզի ան ինքզինք սրբագրէ: Քանի որ իր անզիղձ վիճակը եկեղեցւոյ մարմինին մէջ՝ ուրիշներուն չարիք կը դառնայ:

անզիղձ վիճակը եկեղեցւոյ մարմինին մէջ, ուրիշներուն չարիք կը դառնայ:

(Շարունակելի 28)

ԵՐԵՄՆՈՐԵԱԿ

Չորեքշաբթի, 18 Մարտ 2009

Մեջերս

18.30 Հսկումի ժամերգութիւն
Խորհրդածութիւն՝ Ճաշակենք
«Հաւատով Խոստովանիմ»ը Դ.

Հրագրւոր, 19 Մարտ 2009

Մեծ Պաշար ԻԵ. օր

11.00 Արեւազալի ժամերգութիւն
Խորհրդածութիւն
«Աշխատասիրութիւն»ը

Կրթար, 22 Մարտ 2009

Դաստիարակ Կրթար

09.30 Ժամերգութիւն
11.00 Ս. Պատարագ

Երեքշաբթի, 24 Մարտ 2009

20.00 «Զեկոյց՝ Ազգային Ընդհանուր
Ժողովի մասին»

Չորեքշաբթի, 25 Մարտ 2009

Մեծ Պաշար ԼԱ. օր

19.00 Հսկումի ժամերգութիւն
Խորհրդածութիւն՝ Ճաշակենք
«Հաւատով Խոստովանիմ»ը Ե.

Հրագրւոր, 26 Մարտ 2009

Մեծ Պաշար ԼԲ. օր

11.00 Արեւազալի ժամերգութիւն
Խորհրդածութիւն
«Հեղութիւն»ը

Կրթար, 29 Մարտ 2009

Գալստեան Կրթար

09.30 Ժամերգութիւն
11.00 Ս. Պատարագ

Չորեքշաբթի, 01 Ապրիլ 2009

Մեծ Պաշար ԼԸ. օր

19.00 Հսկումի ժամերգութիւն
Խորհրդածութիւն՝ Ճաշակենք
«Հաւատով Խոստովանիմ»ը Զ.

Հրագրւոր, 02 Ապրիլ 2009

Մեծ Պաշար ԼԹ. օր

11.00 Արեւազալի ժամերգութիւն
Խորհրդածութիւն
«Ողջախոհութիւն»ը

Հաբաթ, 04 Ապրիլ 2009

Ծաղկաշարի Անհօրեալ

16.00 Ընտանեկան հաւաքոյթ

Կրթար, 05 Ապրիլ 2009

Ծաղկաշար

09.30 Ժամերգութիւն
11.00 Ս. Պատարագ
13.00 Մանուկներու թափօր
16.00 Դոնբայէք

Առաջ Երեքշաբթի, 07 Ապրիլ 2009

19.00 Երեկոյեան ժամերգութիւն

Առաջ Հրագրւոր, 09 Ապրիլ 2009

10.30 Ս. Պատարագ
18.00 Կարգ ոտնչուայի
21.00 Կարգ խաւարման

Առաջ Ուրբաթ, 10 Ապրիլ 2009

19.00 Կարգ խաչելութեան եւ թաղման

Առաջ Հաբաթ եւ Ծրագրայն, 11 Ապրիլ 2009

17.30 Ս. Գրային ընթերցումներ
18.30 Ս. Պատարագ

Կրթար, 12 Ապրիլ 2009

Ս. Զատիկ

09.30 Ժամերգութիւն
11.00 Ս. Պատարագ

ՀԱՎՈՒՄԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՄ

ՃԱՇԱԿԵՆՔ «ՀԱՄՏՈՎ

ԽՈՍՏՈՎԱՆԻՄ»ը

13-16 ՀԱՄԱՐՆԵՐ՝ ԿՐ ԽՈՐՀՐԴՈՇԷ

ՏԻՎ. ԱՐԻՍ

ՊԱՅՐԱՔՏԱՐԵԱՆ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 18 ՄԱՐՏ 2009

ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 6.30-ԻՆ

ԱՐԵՎԱԶԱԼԻ

ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՄ

«ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՄ»ը՝

ԿՐ ԽՈՐՀՐԴՈՇԷ

ՊՐԱ. ԿԱՐՈ

ՆՈՒՆՈՒՏԵԱՆ

ՀՐԱԳՐՄԹԻ, 19 ՄԱՐՏ 2009

ԱՌԱՊՕՏԵԱՆ ԺԱՄԸ 11.00-ԻՆ

Ս. ՅԱԿՈԲ

ՔՐԻՍՏՈՒԵԱԿԱՆ ԴԱՏԻՎՐԱԿՈՒԹԵԱՆ
ՅԱՆԶԱԿՈՒՄԸ

ԿՐ ԱԵՐԿԱՅԾՆԷ

ԶԵԿՈՅ՝

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՊՈՎԻ

ՄԱՐՆ

ԶԵԿՈՒՅԱՔԵՐ՝

ԳՐԸ. Տ. ԽԱՅԵԱ Կ. ԱՐԵ. ՅԱԿՈԲԵԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴ ԳԱՆԱՏԱՅԻ ՀՂՈՅ ԹԵՄԻՆ

ՏԵԱԸՆՈՒՊԱԿԻ ՅՈՒՅԱԴՐՈՒԹԻՒՄ՝

ՎԵՅԱՄԵՎ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՊՈՎԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ 24 ՄԱՐՏ 2009-Ի ԺԱՄԸ 20.00-ԻՆ

ՄՈՒԹԵՎԻՒ ՀՂ ԿԵԴՐՈՆ

ԱՇԱՐՈՒՏԵԱՆ ԱՐԱՇ

ՄՈՒՐԲ ՅԱԿՈԲ
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻ

50-ԱՄԵԱԿԻ
ՅՈՒԲԵԼԵՆԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ

Հոպսալորոտիստներ՝
S. ԽԱԺԱԿ ԱՐԵ. ՅԵՎՈՐԵԱՆ
(Առաջնորդ Գառնալի Հայոց Թեմ)

Նախագալորոտիստներ՝
S. ԵՒ ՏՐԿ. ԳԷՈՐԳ ԵՒ ԱՐԱՔԱՐ ՕԶԱՆԵԱՆ

Կազմակերպողիստներ՝
ԵԿԵՂԵՅՈՂ ԳՈՐԾԱԴՐ ՄԱՐԴԱՆԻ

Խմբերգերու կազմակերպիչներ՝
Ս. ՅԵՎՈՐ ԵՒ Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՅՈՒՆԵՐՈՒ ՄՐԱՅԱՂ ԵՐԳՉԱՆՈՒՄԻ
ԽՈՐԱԿԱՐ

S. ՀՐԱՅՐ Ա. ԲԶԱՂ. ՆՐԱՊՂԱՆ
ՕԳՆԱԿԱՆ ԽՈՐԱԿԱՐ
ՏՐԿ. ՅԵՍԱՐԿ ԻՆՃԵՃՐԻԿԱՆ

Մեներգերու կազմակերպիչներ՝
ՏՐԿ. ՅԵՍԱՐԿ ԳԱՊՊՐԵԱՆ (Soprano)
ՊՐԿ. ՎԵՐՈՒԺԱՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ (Baryton)

Կիրակի, 29 Մարտ 2009-ի Երեկոյան Ժամը 7.00-ին
Վայր՝ Cathédrale St-Sauveur
10025 Boul. De L'Acadie
Montréal, QC

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ Է

ՄՈՒՐԲ ՅԱԿՈԲ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻ

Կազմակերպողիստներ՝
ԵԿԵՂԵՅՈՂ ԳՈՐԾԱԴՐ ՄԱՐԴԱՆԻ

ԵՒ

ՏՐԿԱՆՆՅ ՕԺԱՆՈՒԿ ՄԱՐԴԱՆԻ

կը մատուցուի

ՄԻԶԻՆՔԻ ԸՆԹՐԻՔ

ԳԵՂԱՐՈՒԽԵԱՏԱԿԱՆ յԱՅՏԱԳԻՐ

Չորեքշաբթի, 18 Մարտ 2009
Երեկոյան Ժամը 8:00
Մոնրեալի Հայ Կեդրոն

Տեղեր ապահովելու համար հաճեցէք հեռաձայնել
Տիկ. Վիգի Զարգասատեանին՝ 514 979 9415,
կամ Եկեղեցւոյ դիւանատուն 514 331 5445 x202 քիֆն,
կամ Կիրակի օրերը դիմել Տիկնանց Օժանդակ Մարմնին:
Մուտքի նուէր՝ 15\$